ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 11

Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2025թ. հունիսի 19-ին

կայացած գիտական խորհրդի նիստի

Օրակարգում՝

1.Փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2024-2025 ուստարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանությունների ամփոփում: /զեկ.՝ Ա.Բաղդասարյան/

2.2024-2025 ուստարվա կրթական ծրագրերի ղեկավարների հաշվետվության հարցը:/զեկ.՝ կրթական ծրագրերի ղեկավարներ/

3.Բանբեր Երևանի համալսարանի: Փիլիսոփայություն, հոգեբանություն և Արդի հոգեբանություն ամսագրերի միջազգայնացման հարցը: /Զեկ. Է.Ա.Հարությունյան, Հ.Մ.Ավանեսյան/

4. Առկա ասպիրանտների ատեստավորման հարցը:

5. Տպագրության երաշխավորման հարցը.

/ 1. Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոցենտ, փ.գ.թ., Արմեն Սարգսյանի «Гарегин Нжде. По ту сторону нацизма и фашизма» մենագրություն:

2.Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ Դիանա Սարգսյանի և բ.գ.թ., Սիրանուշ Հովհաննիսյանի «Հեքիաթի հոգելեզվաբանական կիրառություն… և խոսեց հեքիաթը» ուսումնական ձեռնարկ/

6.Պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրություն /1 տեղ՝ ասիստենտ, Անձի հոգեբանության ամբիոնի ասիստենտ՝ Աննա Հակոբջանյան/

7. Ընթացիկ հարցեր:

1. Ա.Բաղդասարյանը ներկայացրեց փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի 2024-2025 ուստարվա մագիստրոսական թեզերի և ավարտական աշխատանքների պաշտպանությունների արդյունքները: Նշվեց, որ հանձնաժողովը գոհ է եղել աշխատանքներից և թեմաների ընտրություններից: Գնահատվեց նաև ամբիոնի կողմից կատարված աշխատանքները, որի շնորհիվ ժամանակին ավարտին են հասցվել թեզերը և ավարտական աշխատանքները:

   Ն.Խաչատրյանը լրացրեց, որ հեռակայում սովորող ուսանողների 70%- ի ՄՈԳ-երը շատ ցածր են եղել:

   Ա.Բաղդասարյանը քննարկեց նաև մագիստրատուրայի ընդունելության և դիմորդների հարցը:

   Գիտխորհրդի անդամները, ինչպես նաև ընդգրկված ուսանողները առաջարկություններ արեցին ստեղծել հոլովակներ, որոնցով կիրազեկեն տվյալ մագիստրոսական ծրագրերը:

2. 2024-2025 ուստարվա կրթական ծրագրերի ղեկավարները հաշվետվություն ներկայացրեցին կատարված աշխատանքների վերաբերյալ: Զեկուցողներ՝ Ս.Պետրոսյաը և Վ.Պապոյանը նշեցին այն աշխատանքները, որոնք ուղղված են ԿԾ-ի բարելավմանը:

   Դրանք են՝

   - Վերջարդյունքների համապատասխանեցում,
   - Հեռահար լաբորատորիայի մասնակցությամբ կազմակերպված միջազգային գիտաժողով,
   - Հայերեն լեզվով տպագրված ձեռնարկներ, մենագրություններ,
   - Օտար՝ անգլերեն լեզվով երկու առարկաների շրջանակներում ներկայացված 2 -ական դասախոսություններ,
   - Դասախոների վերապատրաստումների մասնակցություն,
   - e-learning համակարգի ակտիվ կիրառում նյութեր ստանալու և հանձնարարություններ կատարելու համար:
   - Ապրիլ-մայիս ամիսներին անցկացված մոնիթորինգ 2-րդ կուրսի ուսանողների հետ նոր ԿԾ-ի շրջանակներում:
   - Միջֆակուլտետային և միջմասնագիտական միջոցառումների կազմակերպում:

Դասախոսները հարց բարձրացրեցին registr համակարգի վերաբերյալ, կապված ժամանակացույցի հետ։ Ն.Ալավերդյանը նշեց, որ ժամանակացույցը կառավարումը իրականանում է ցանցի կողմից։

3. Է.Ա.Հարությունյանը և Հ.Մ.Ավանեսյանը ներկայացրեցին «Բանբեր Երևանի համալսարանի։ Փիլիսոփայություն, հոգեբանություն» և «Արդի հոգեբանություն » ամսագրերի միջազգայնացման կարգավիճակը։

Հրատարակչությունը ներկայացրել է չափանիշներ, ըստ որի ցանկալի է.

- խմբագրական խորհրդի անդամների տպագրությունները ամսագրում քիչ տոկոս կազմեն,
- գրախոսները պետք է լինեն արտասահմանյան ընկերներ, հեղինակավոր գիտնականներ,

Ա.Բաղդասարյանը նշեց նաև մեթոդ խորհրդի կազմի փոփոխությունը. Հրաչյա Հովհաննիսյանի փոխարեն Սահակ Հովհաննիսյան։

4. Առկա ասպիրանտների ատեստավորման և ասպիրանտ ղեկավարելու թուլտվության հարցը։ Ատեստավորվեցին հետևյալ ասպիրանտները.

- Էմմա Արիզևա-ԺԹ.00.04
- Արմինե Փաթաթանյանը ԺԹ.00.04
- Ծաղիկ Միքայելյանը ԺԹ.00.01
- Էդիտա Առաքելյանը ԺԹ.00.01
- Աիդա Վարդանյան ԺԹ.00.01
- Մանե Սարգսյան ԺԹ.00.04 տեխափոխել ԺԹ.00.01, հաստատել «Արցախից բռնի տեղահանված անձանց սոցիալհոգեբանական հարմարման առանձնահատկությունները անձնային նարատիվների ուսումնասիրման միջոցով» թեման և նշանակել ղեկավար հ.գ. դ., պրոֆեսոր Ս.Ֆ. Հարությունյանին։

Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ Սահակ Վիուլի Հովհաննիսյանը դիմել է ԺԹ.00.01 ծածկագրով թեկնածուական ատենախոսություններ ղեկավարելու համար։

Ֆակուլտետի գիտխորհուրդը երաշխավորել է այն։

5. Երաշխավորվեց տպագրությանը ներկայացված Փիլիսոփայության պատմության, տեսության և տրամաբանության ամբիոնի դոցենտ, փ.գ.թ., Արմեն Սարգսյանի «Гарегин Нжде. По ту сторону нацизма и фашизма» մենագրությունը և

Ընդհանուր հոգեբանության ամբիոնի դոցենտ Դիանա Սարգսյանի և բ.գ.թ., Սիրանուշ Հովհաննիսյանի «Հեքիաթի հոգելեզվաբանական կիրառություն… և խոսեց հեքիաթը» ուսումնական ձեռնարկը։

6. Անձի հոգեբանության ամբիոնի ասիստենտ՝ Աննա Հակոբջանյանի պրոֆեսորադասախոսական համակազմի մրցութային ընտրություն ասիստենտի տեղի համար արդյունքները. 24 ներկաներից մասնակցեցին 22-ը՝ կողմ-21, դեմ-1, անվավեր-0։

7. Ընթացիկ հարցեր։

Նիստի նախագահ՝ Ա. Բաղդասարյան

Նիստի քարտուղար՝ Վ.Պապոյան